ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13-ը հուլիսի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ն. Հարությունյանս, քննության առնելով «Ն ԵՎ ՌՈՒՖ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայցադիմումն ընդդեմ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Հարսնաձոր» ՍՊԸ՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունն անվավեր ճանաչելու և դրա հիման վրա գնման ընթացակարգին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվորը 26.06.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը անվավեր ճանաչելու և դրա հիման վրա գնման ընթացակարգին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր Ն.Հարությունյան) 30.06.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները վերացնելու համար 3-օրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 07.07.2023 թվականին՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկված: Մասնավորապես, դիմումոմով Հայցվորը նշել է, որ ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-23/68 գնման գործընթացը նախատեսված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչը հաստատվում է դիմումին կից ներկայացվող բաց մրցույթի մասին հայտարարությունով:

Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել 10.07.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ն ԵՎ ՌՈՒՖ» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Հարսնաձոր» ՍՊԸ՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունն անվավեր ճանաչելու և դրա հիման վրա գնման ընթացակարգին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և համարել Դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 26.06.2023 թվականին:

2. Քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի օգոստոսի 18-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**